

ՅԱԻԱԿՅԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ՏԱՅԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ՈՒՂՂՈՒԱԾ

ԱՌԱՐՀ. ԳԵՐՊԾ. ՀՄԱՅԵԱԿ ՎԱՐԴ. ԿԵՏԻԿԵԱՆ

ԸՆԴՀ. ԱՌԲԱՀԱՅՐ ՄԻԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վրենա, 24, Սեպտ. 1968

Սիրելի Գերապայծառ Տէր եւ Հայր,

Միաբանութեանդ մեծ կորուստը՝ յանձին վաստակաւոր Հայր Ղեւոնդ Վրդ. Տայեանի, կը համակէ մեր բոլորին սրտերն ալ մեծ ցաւով:

Արդարեւ մահով առաջ եկած տրտմութեան վրայ, սակայն, կ'իջնէ պայծառ եւ անփարար կրկնակ լոյսը մեր հաւատքին եւ բազմավաստակ հանգուցեալին աստուածահաճոյ գործերով դիզած արժանիքներուն:

Հանգուցեալ Հայրը, որ անհուն նուիրումով Աստուծոյ փառքը եւ օրհներգը տփնեցաւ՝ երաժշտական քաղցրալուր ձայնակներով՝ յանդիմանել երկրիս վրայ, պիտի արժանանայ՝ փառաբանելու եւ ունկնդրելու՝ երկնային Դասերու անդադրում երգը գոհարանութեան, ձայնակցելով անոնց:

Քրիստոս Աստուած իր հանգուցեալ հաւատարիմ ծառային հոգւոյն պարգեւէ յաւիտեանական հանգիստ ի դասս արդարոյ:

Սիրելի Գերապայծառ Տէր, ինձի հետ մեր բոլոր միաբան Հայրերը կու գան յայտնելու իրենց սրտացին ցաւակցութիւնը Զեք եւ բոլոր Մեծարգոյ միաբան Հայրերուն: Կ'աղօթեմք միաժամանակ, որ բարին Աստուած՝ մեզմէ բաժնուողներու փոխարէն՝ մեր երեւ. Հիմնադրի հոգիով առի նոր կոչումներով լրացնէ ու բազմապատկէ իր նշանակութեամբ մշակներու թիւը:

Աղօթքի եւ սիրոյ միութեամբ մնամ

Գերապայծառ Տեառնդ

✠ Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈԶԵԱՆ
Ընդհ. Աբրահայր

Զմամ, 5 Հոկտեմբեր 1968

Սեպտեմբեր ամսոյն, Ս. Ղազարէն գուժուած բօքը տխրութեամբ համակեց մեր սրտերը: Հայր Ղեւոնդ Տայեանի վախճանումը իսկական կորուստ մըն է ոչ միայն Միջերկրեան Միաբանութեան, այլ համայն հայ կաթողիկէ նուիրապետութեան համար:

Այս տխուր առթիւ, բարեհաճե՛ք ընդունիլ, Արքայապետ Գերապայծառ Տէր, իմ, վանաբնակ վարդապետներու եւ սեր բոլոր միաբանակից եղբայրներու խորին ցաւակցութիւնները:

Կ'աղօթեմք խոնարհաբար որ Աստուած իր արդարեւ լոյսն աչք ընդունէ անոր հոգին եւ օղբերգ ազգիս՝ նման սրբակենցաղ ու վաստակաւոր Կղերականներ:

Ս'առ յարգանքով Զերդ աղօթաբար

ՅՈՎԱՆԻԿ Ծ. Վ. ՊԱՍՄԱՃԵԱՆ
Մեծաւոր վանաց Զմամու

Երեւան, 30 Սեպտեմբեր 1968

Ընտանիքով եւ պարագաներով դառնապէս վըշտացած ենք մեր սիրելի ու անմոռանալի Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանի անսպասելի մահուան համար: Անսպասելի, քանի որ այդտեղէն այցելուները միշտ քաջառողջ կը ներկայացնէին մեր սիրելի վարդապետը, հակառակ իր յառաջացած տարիքին: Ցաւալի բօքը առաջին անգամ լսեցի ասկէ հինգ օր առաջ Հ. Վահան Յովհաննէսեանէն, նոյն օրն ալ, քանի մը ժամ վերջ, փաստաբան Վրդ. Գրգոր մահուան ծանուցումը յղուած Ս. Ղազարէն: Որքան ալ ծանր ըլլայ այդ գոյժը մեզի համար, ստիպուած ենք համակերպիլ Աստուծոյ կամքին: Միաժամանակ կը մխիթարուինք այն մեծ վաստակով, որ հանգուցեալը քողով սերունդներուն: Իր քողով վաստակով ողբացեալ Հ. Ղեւոնդը նոր էջ մը բացաւ Ս. Ղազարի մշակութային բազմադիմի գործունէութեան մէջ: Էջ մը, որ պիտի մնայ բացառիկ, հաւանաբար: Եւրոպացի եւ ընդհանուր քաղաքակիրք աշխարհը Հ. Ղեւոնդի ջանքերով առաջին անգամ վերահասու եղան Հայ եկեղեցւոյ հոգեպարար երաժշտութեան: Օտարները այս կամ այն չափով ծանօթ էին մեր ազգային շատ արժէքներուն, իսկ մեր հոգեւոր երաժշտութիւնը, որ մեր ժառանգած հարստութիւններէն մէկն է, անծանօթ կը մնար անոնց: Հ. Ղեւոնդի մոգական գրչով եւրոպացիներուն բացուեցաւ նաեւ մեր հո-

գեւոր երաժշտութեան աշխարհի հարստութիւնը: «Ինչ որ ըրած եմ, — գրած էր ինձ հանգուցեալը իր նամակներէն մէկուն մէջ, — հայ եկեղեցւոյ պայծառացման եւ Աստուծոյ փառքին համար է»: Աւելի լաւ կարելի չէր տալ իր քափած ջանքերու բացատրութիւնը: Իր վաստակը պիտի հանդիսանայ կորոզներէն մէկը՝ բարձրացած ի պատիւ Ս. Ղազարի Միաբանութեան: Օրհնեալ ըլլայ իր յիշատակը:

Զեր Վրդ. Բաժնեկից
Ա. ՏԱՅԵԱՆ

Երեւան, 20 Սեպտ. 1968

Մեծ ցաւով կու գամ ներկայացնելու Զեր Միաբանութեան, իմ խորին ցաւակցութիւններս, հօրեղբորս կսկծալի մահուան առիթով. սնած, ուսած, մեծցած անոր ծոցին մէջ, ուրիշ շատերուն կարգին, առանց կարեւոր լրացնելու իր երկը՝ որուն վրայ հոգիով ու մարմնով կ'աշխատէր տարիներէ ի վեր:

Աստուծոյ կամքը այդ է եղեր. խղի խայրով մը կը մաշէ իր վերջին վայրկեաններուն եւ յուզարկաւորութեան չկարենալ ներկայ գտնուելու. կամէ՛ս անկախ, անձնագրային պատճառով:

Սրբազան պարտականութիւն մը կը նկատեմ, առաջին առթիւ այցելութիւն մը տալ, ամփոփումով իր շիրմին վրայ եւ Զեքի ալ խորին շնորհակալութիւններս յայտնելու, Զեր բոլոր ըրածներուն համար:

ԱՐՄԻՆԷ ՏԱՅԵԱՆ

Երեւան, 5 Հոկտ. 1968

Մոսկուայից վերադառնալով Զեր նամակն ըստացայ:

Հ. Ղեւոնդ Տայեանի մահն աւելի քան ցաւալի է: Ընդունեցէ՛ք իմ անկեղծ ցաւակցութիւնը Զեք եւ Միաբանութեանը:

Անակնկալ կերպով կեանքից հեռացաւ մի մարդ՝ ոչ միայն գերագին ու բարեհամբոյր, այլ խոշոր ու բազմավաստակ մասնագէտ, որ այլեւ շատ քիչ ժամանակի պէտք ունէր իր երկարամեայ կապիտալ գործն աւարտելու համար: Շատ եւ շատ ամիսս: Նաեւ ամիսս այն բանի համար, որ ես անձամբ չկարողացայ իրեն տեսնել եւ խօսել հայ երաժշտութեան հետաքրքրական շատ հարցերի մասին:

Հ. Վահանն ինձ պատմեց գործի վիճակի մասին: Լաւ է, գոնէ քիչ բանով է կիսատ մնացել եւ պէտք է շարունակուի, տպագրութեան հասցուի աշխատանքն աւարտող 11-ն, քերես ամենակարեւոր հատորը: Արդեօք, երկրասարդը, որ պէտք է խմբագրական աշխատանքը տանի, իրապէս ի վի-

ճակի՞ է այդ անելու: Նօթագրութիւն իմանալն, ինչպէս գրում էք, այդ գործի համար հազիւ քէ բաւարար լինի: Ինչ որ է, ցանկանա՛ք յաջող ընթանայ եւ աւարտուի այդ մեծ աշխատութիւնը:

ՍԷՐՈՎ՝
ՌՌԲԵՐՏ ԱԹԱՅԵԱՆ

Դամասկոս, 7 Հոկտ. 1968

Սրտի մեծ ցաւով եւ տխրութեամբ կարդացի իմ սիրելի եւ յարգելի ուսուցիչիս Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանի մահը՝ որ քէ՛ հայ եկեղեցական երաժշտութեան եւ քէ՛ հայ գրականութեան համար կորուստ մըն է, եւ նաեւ կորուստ մըն է Միջերկրեան Միաբանութեան:

Հանգուցեալը եղած է իմ ուսուցիչս 1907 եւ 1908 տարիներուն եւ միշտ կը յիշեմ իրեն գուրգուրանքը եւ ազնուութիւնը մեզի հանդէպ:

Կը ներկայացնեմ իմ խորին ցաւակցութիւններս պարզ Միաբանութեան անդամներուն եւ կը մաղթեմ իրենց երկայն կեանք եւ միշտ յաջողութիւն եկեղեցական եւ ազգային գործերուն մէջ:

ՄԻԱԾ ԶԵՐՆ ԽՈՆԱՐՀ ՈՐԴԻՆ
ՀՐԱՆՏ ՄԱՆՈՅԵԱՆ
Զօրավար պաշտօնի

Նիւ ձըբսի, 8 Հոկտ. 1968

Հաւատացէ՛ք քէ սիրտս ջախջախեցաւ երբ ընդունեցի անակնկալ գոյժը մահուան իմ սիրելի հայրենակիցիս, բարեկամիս, սրտիս բանդէնին մէկ հերոսին, Հայր Ղեւոնդ Տայեանի: Անգիտակ իր մահուան՝ իրեն նամակ մը գրած էի որ անպատճառ վաճառեմ պիտի ըլլայ իր մահէն ետքը: Քանի մը ամիս առաջ իր նամակը ընդունած էի եւ միայն երկու շաբաթ առաջ ալ իր Շարական Հայ եկեղեցւոյ հատորներուն վերջինը, ուրեւրդը, որ բոլոր նախորդներուն հետ նուիրած էր ինձի, ամէն մէկը ստորագրելով եւ ձօնելով իր հայրենակիցին: Անշուշտ շատ տարիներ առաջ, երբ եզակի հանդիպումն անցաւ վաճառելու տիկնոջս հետ, ճանչցայ երջանկայիշատակ Հայր Արսէն Ղազիկեանը եւ Հայր Վարդան Հացունին, բայց ոչ Հայր Ղեւոնդը, երբ նոյնիսկ վաճառել էր այդ ատեն (1925ին): Բայց հետագային, երբ երկու Պարտիզանկի Հայրերը վախճանեցան, քաղցրութեամբ բարեկամական կապեր հաստատուեցան Հ. Ղեւոնդի եւ իմ միջեւ: Իր տաղանդին եւ նուիրման հիացող մը եղած եմ սկիզբէն ի վեր: Իր կորուստը կ'ողորմեմ ձեզի հետ խորունկ ցաւով:

Այնքան խոր է սէրս Միաբանութեանդ հանդէպ, որ կրնամ ըսել արտառոյ վանուց ես ինքս ալ Միջերկրեան մըն եմ, միայն սիրոյ ուխտով: Բա-

Venezia, 14 settembre 1968

Triste notizia, che addolora e me e famiglia, quella della serena dipartita nel Signore «RE DELLE ARMONIE», del P. Maestro Leonzio Dayan, che lascia dietro a sé profumo di virtù religiose, ecclesiastiche e civili.

Illustre e valido musicista e cantore ha lavorato spesso pregando (come LUI mi comunicava) per la sacra musica e il canto di

Armenia, libera nell'isola meravigliosa di San Lazzaro.

Splende così la sua memoria e resta documento!...

Il Sommo Eterno DIO lo ha già in Pace e Luce: affrettiamoci tutti con la preghiera la Gloria tra le Angeliche Schiere degli Spiriti Puri e Santi!!!

Con ogni deferenza e rispetto,

Prof. GIOVANNI VENNI

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԶՈՅԳ ՎԱՍՏԱԿԱՆՈՐ ՀԱՅՐԵՐՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ՈՒՂՂՈՒԱԾ

ԱՌԱՐՀ. ԳԵՐՊԾ. ՀՄԱՅՆԱԿ ՎԱՐԴ. ԿԵՏԻԿԵԱՆ

ԸՆԴՀ. ԱՐԲԱՀԱՅՐ ՄԵԽԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Poggio Catino, 13 settembre 1968

Prendo viva parte al cordoglio e suffragi della diletta Congregazione Mechitarista per per la benedetta anima del venerando Padre Leonzio, suo illustre figlio, cui ero legato diuturni sensi di sincera affettuosa stima. Infaticabile studioso e divulgatore del canto particolarmente liturgico della chiesa armena, cantore di singolare devota espressione possa il caro Padre Leonzio ora unire la sua voce melodiosa supplichevole in cielo dinanzi al trono del Signore a quella dei nostri santi padri, per le sorti del nostro amato travagliato popolo.

Cardinale AGAGIANIAN

Սրտանց կը մասնակցիմ սիրելի Մխիթարեան Միաբանութեան սուգին եւ աղօթքներուն, իր աւանաւոր գաւակին, մեծարգոյ Հ. Ղեւոնդ Վրդ. ի օրհնեալ հոգիին համար, որուն կապուած էի անկեղծ եւ գորովալիք յարգանքի մշտաւեւ զգացումներով: Անխոն ուսումնասէր մըն էր եւ տարածող մը մասնաւորապէս հայ եկեղեցւոյ ծիսական երգեցողութեան, եւ երգիչ՝ եգական ու բարեպաշտ արտայայտութիւններով զեղուն: Այժմ սիրելի Հ.

Ղեւոնդ վարդապետը, երկինքի մէջ, Աստուծոյ գահին առջեւ, բոլոր միացնէ իր քաղցրամուտգ եւ աղբասական ձայնը՝ մեր սուրբ հայրերու ձայնին, ի նպաստ մեր սիրելի եւ բազմաշարժար ժողովուրդի նախաազգրին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՀԱՆԵԱՆ

Էջմիածին, 26 Սեպտ. 1968

Վշտակցաբար կ'աղօթենք Ուխտիդ ժրջան միաբան, նորոգ հանգուցեալ Հ. Ղեւոնդ Տայեանի հոգւոյն խաղաղութեան համար: Տէրը բոլոր օրհնէ անոր վաստակը եւ լուսաւոր պահէ անոր արդար յիշատակը: Սուրբ Հոգին բոլոր մխիթարէ եւ զօրացնէ ձեր սիրտը:

ԿԱՌՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԷՆ

Jerusalem, 9 October 1968

Express our deep condolence for loss sustained by your fraternity by demise great scholar Father Dayan.

PATRIARCH YEGHISHE

Roma, 8 ottobre 1968

Porge vive condoglianze per la morte del compianto Padre Leonzio Dayan e promette suffragi.

✠ EUGENIO Card. TISSERANT

Roma, 8 ottobre 1968

Venuto ora a conoscenza del pio transito del Padre Leonzio Dayan, invia sentite condoglianze alla Congregazione dei Padri Armeni di S. Lazzaro ed assicura cristiani suffragi per l'anima dell'Estinto.

Card. OTTAVIANI

Լ.Ք. Փէք, 17 Սեպտ. 1968

Յաւով կը լսեմ մեր սիրելի Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանին մահը: Խորին ցաւակցութիւններս Ձերի եւ ամբողջ Ուխտիս, որ իրմով ընտիր անդամ մը կը կորսնցնէ: Տիրամայրը, որուն այնքան ջերմեանով էր հանգուցեալ Հայրը, օրհնէ Միաբանութիւնս եւ մեկնողներուն տեղ նորագոյներն հասցնէ, անոնց միաբանաւոր ոգիով եւ առաքինութիւններով օժտուած:

Ջերմագին եղբայրական ողջունիւ

✠ ԿԱՐԱՊԵՏ ԱՄԱՏՈՒՆԻ

Marseille, 17 Octobre 1968

Très peine apprendre décès Père Dayan exprime profondes condoléances devant cette grande perte pour nous tous, surtout pour Votre Congrégation. Prie Seigneur daigner récompenser éternellement âme de cet excellent prêtre qui fut sur terre modèle sainteté sacerdotale.

MONS. TCHOUHADJIAN

Lisbon, 7 Octobre 1968

Le décès du R. P. Leonzio Dayan que nous apprenons de Votre faire-part nous remplit de tristesse et nous Vous transmettons nos condoléances émues pour disparition du dévoué érudit et historien de la liturgie arménienne.

FONDATION GULBENKIAN

Como, 1 Gennaio 1969

Profondamente rattristati dipartita Padre Karekin, partecipiamo al dolore e lutto tutti confratelli innalziamo preghiere.

ONNIK MANOUKIAN e FAMIGLIA

Atene, 4 Gennaio 1968

Condoglianze causa decesso Padre Lazarian.

FAMIGLIA MANOUKIAN

Միլան, 31 Դեկտ. 1968

Իմ եւ ընտանիքիս խորին ցաւակցութիւնները, Հայր Գարեգինին տխուր մահուան համար:

ՍՐԱՊԵԱՆ

Միլան, 31 Դեկտ. 1969

Յուզումով կը մասնակցինք Ձեր մեծ սուգին, բոլորիս սիրելի Հ. Գարեգինի դառն կորուստին առիթով, եւ կ'աղօթենք իր բարի հոգւոյն հանգըստեան համար:

ՀՐԱՆԴ ԱՆԱՀԻՏ ԲԱՄՊԱԿԵԱՆ

Milano, 30 dicembre 1968

Profondamente commosso dolorosa perdita amatissimo Padre Karekin. Esprimo Voi e Congregazione vivissime condoglianze.

MANUG KHANBEGHIAN

Milano, 31 dicembre 1968

Col cuore infranto partecipiamo funerali amatissimo Padre Karekin Lazarian.

SEROPE E KNAR EIGHIAN

Venezia, 30 dicembre 1968

Uniti nel dolore, preghiamo pace anima eletta Padre Karekin.

BALLARIN ROMANO